ՆԱԽԱԳԻԾ 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2010 թվականի -ի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 23-րդ հոդվածի 3-րդ մասին, <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 16-րդ մասին և և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ** է.

1. Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2010 թվականի չորրորդ եռամսյակում Ա/Ճ Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ 3-րդից 5-րդ կմ-ների ջրածածկ հատվածներ միջպետական նշանակության ա/ճ-ի ճանապարհահատվածի ասֆալտապատման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացնել 229.000,0 հազար դրամ, որից՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով 229.000,0 հազար դրամ և «Տեխնիկական հսկողության» հոդվածով՝ 1000,0 հազար դրամ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին>> N 1522-Ն որոշման N 13 հավելվածում կատարել լրացումներ՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորումն իրականացնել նշված աշխատանքների գծով սահմանված կարգով ներկայացվող փորձագիտական դրական եզրակացություն ունեցող նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության պայմաններում:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված աշխատանքների գնումը կատարվում է մեկ անձից գնման ձևով՝ <<Հրազդանի ճանապարհաշինական և շահագործման

ձեռնարկություն>> բաց բաժնետիրական ընկերության հետ, հաշվի առնելով, որ Ա/Ճ Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ 3-րդից 5-րդ կմ-ների ջրաածծկ հատվածներ միջպետական նշանակության ա/ճ-ի ճանապարհահատվածի հողային պաստառի կառուցումը կատարվել է նշված ընկերության կողմից, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի համաձայն՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի <<Գնման առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման կարգը, մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը, լիազոր մարմնին ներկայացված բողոքների քննարկման ու գնումների գործընթացի վերահսկման միավորի գործունեության կարգը, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գնումների կատարման կարգը, բնական մենաշնորհ հանդիսացող ծառայությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> N853 որոշմամբ հաստատված՝ գնման առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման կարգի 7-րդ կետի 3-րդ ենթակետի <<բ>> կետի պահանջների պահպանման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Մ. Վարդանյան

Հավելված 1

ՀՀ կառավարության « »---------2010թ. N որոշման

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N1522 որոշման N13 հավելվածում կատարվող լրացումը

NN	Ճանապարհահատվածների անվանումը	Չափի միավորը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)		Գնման ձևը	Պայմանագրերի	
			Քանակը	Գումարը (հազար դրամ)		Կնքման ժամկետը	Կատարման վերջնաժամկետը
	1	2	3	4	5	6	7
	Ընդամենը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն			**230000.00**	x	x	x
	Բաժին N11 Խումբ N01 Դաս N01 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ, այդ թվում						
	<<Շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում>>. այդ թվում			**230000.00**	x	x	x
1	Հիմնանորոգման աշխատանքներ	դրամ	1	229000.00	ՄԱ	Նոյեմբեր	Նոյեմբեր
2	Տեխնիկական հսկողություն,	դրամ	1	1000.00	ՄԱ	Նոյեմբեր	Նոյեմբեր

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> որոշման նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է Ա/Ճ Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ 3-րդից 5-րդ կմ-ների ջրածածկ հատվածներ միջպետական նշանակության ա/ճ-ի ճանապարհահատվածի առաջնահերթ հիմնանորոգման անհրաժեշտությունից ելնելով, հաշվի առնելով նշված ճանապարհահատվածի երթևեկության ծանրաբեռնվածության աստիճանը:

Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության 2010թ. պետական բյուջեի ծախսերում և եկամուտներում ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ